սելու, թէ՝ և օտար ազգաց, տեղւոյն մերձակայ բնակչաց. ըստորում Արժանապատիւ Փոխանորդին Նուխւոյ Հայր Արիստակէս Վարդապետի սրտաշարժ յորդորանքներից յետոյ յիշատակեալ Խօշկաշէն գիւղումն, ուր ժողոված էին ժամադրութեամբ դպրոցի շինութեան համար բազմաթիւ ժողովուրդք, նոյն ժամայն իւրեանց ազգասիրութիւնը ցոյց տալով՝ հետեւեալ օրը՝ բազմութեամբ դիմեցին դէպի բոլոր նիւթերին պատրաստութիւնը. ուր եօթն հարիւր սայլ քար և կիսով չափ աւազ, և այլ կարեւոր նիւթերով լցրին շինութեան տեղը, նոյն ճիգը մինչեւ դպրոցի աւարտը յանձնառու լինելով. իսկ և այն ազգային ժողովոյ մէջ՝ որ գտնւում էր Դուզախլուբնակ կալուածատէր Թուրքազն Ազնուաշուք Աղաբէկն՝ իւր մարդասիրական զգացմունքից ստիպուելով՝ Նուիրեց վաթսուն սայլ փայտ*)՝ կիր պատրաստելու համար, խոստանալով ամենայն յօժարութեամբ նպաստաւոր լինել շինութեանը հարկաւոր նիւթերով։ Այս ազգասիրական սուրբ հոգւոյ զգացմանց գեղեցիկ առաջարկութիւնները՝ ոչ մի՛ մարդոյ չէ, եթէ ոչ Նորին Արժ. անձանձիր հոգարկութեանը, այն է՝ Հ. Արիստակէս Վարդապետի, որոյ անդուլ ջանացողութեամբը՝ այսօրուան օրը մեր ուսումնակարօտ ժողովուրդը Նուխւոյ վիճակի՛ իբրև 'ի քնոյ արթնացած լոյս է շօշափում գիտութեան, ուսման և յառաջադիմութեան։

Ազգասէր Հայք՝ Ձեր այս քաղցր աշխատակրութիւնը ազգի օգտի համար՝ անջնջելի պիտի դրոշմուի քո սիրելի ժողովրդոց սրտի վերայ, և Ձեր անունը՝ անմահ յիշատակօք պիտի յաւերժանայ նոցա մէջ՝ յորդւոց յորդիս. և երախտապարտ պիտի գտնուին՝ միշտ սիրելով զՁեզ ունիլ 'ի վերայ իւրեանց արթուն և հոգատար հովիւ. ուրեմն յուսով եմք բոլորեքեանքս, թէ՝ դուք ազգիդ յառաջադիմութեանը համար անձերնիդ զոհ կ'մատուցանէք։

Իսրայէլ Տ. Գրիգորեան Մամիկոնեանց։
ի Թ. Նուխի։

(*) Այս յարգելի այլազգի անձին վաթսուն սայլ փայտն, որ իւրաքանչիւր սայլն հաշուելով երեք երեք ռուբլի արծ. բոլոր գումարն առնէ 180 ռուբլի, մի անուշան նուիրագործութիւն, որ այլազգէն բարոյական անձին են ապացոյց։

## ԱԳՈՒԼԵՑԱՑ ԴՊՐՈՑ

—

### Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Ամէն հասկացող անձն գիտէ որ բնութեան օրէնքները անփոփոխ են. բայց մի և նոյն ժամանակն ալ բազմակողմանի են. ուստի և նորանց յատկութիւնները երկրագնդի ամէն կողմը մի տեսակ չեն ներգործեր։ Ահա այս իսկ պատճառաւ նոքա մարդկային ազգի թէ ներքին և թէ արտաքին կազմուածքին վրայ արած են այլ և այլ ազդեցութիւնք։ Մի տեսակ կրթութիւն և դաստիարակութիւն կ'կարծեմ թէ չեն կրնար ստանար արեւմտեան Ասիացի մը և կենտրոնական Ափրիկեցի մը։ Եւ ոչ միայն այսքան, հապա և հողագնդի միեւնոյն գօտւոյ տակ գտնուող ժողովուրդներուն մէջն ալ տարբերութիւններ շատ կան։ Շատ անգամ էս մեր Հայ ուսուցիչներէն—աշխարհքի ամենէն ազնիւ և ամենէն դժբաղդ էակներէն լսած եմ՝ թէ այս ինչ տեղի տղայքը սրամիտ են, այն ինչ տեղի աշակերտք բթամիտ են եղեր։

Արդ այս միտքին ապացոյց ունենալու համար այս և այն կողմը չեմ կամենար ընկնել, վասն զի նախ՝ դորան մանրամասն բացատրութեան համար աւելի բնագէտ լինել պէտք է, որ ես չեմ. երկրորդ՝ դա հասկանալի է ամէն իմացող անձանց, և ընդունուած է ինչպէս մին անհերքելի ճշմարտութիւն, և կամ այլ մտքով մեկնելով կարող ենք ըսել՝ թէ կեանքի ամէն օրուայ փորձերը միշտ մեզ ցոյց կուտան դորա ճշմարտութիւնը։ Ես որ իմ կենաց հանգամանքներէն ստիպեալ հայրենեացս արեւմտեան ծայրէն արեւելք եմ ընկած՝ կերպով մը դժբաղդութիւններ տեսած, կերպով մ'ալ բարոյական, ֆիզիքական և մտացական օգուտներ եմ ճանապարհորդութիւններէն քաղած՝ բուն իմ նախնեաց օդը ծծելու՝ ջուրը խմելու բաղդը ունեցած, երբեմն ալ տեղ տեղ ուսուցչութեան այն վեհ կոչման արժանացած փորձով տեսած եմ շատ անգամ իմ առաջ բերած կէտի անհերքելի ըլլալը։ Ուստի խօսքս չերկարացնելով կուզեմ ըսել՝ թէ Ագուլեաց երեխերը այլ շատ տեղերի տղայոցմէ սրամիտ երեւցան ինձ, վասնորոյ ես ալ այդ երեխանց դպրոցին վրայ ունեցած կարծիքս և անոր մէջ եղած ինձ յայտնի յառաջադիմութիւնը

պիտի կարողացածիս չափ ստորագրեմ, որնոր . . . . . Խմբագրութիւնը Արարատ պատուական ամսագրի՝ կ՚յուսամ թէ չի զլանայ իր էջերի մի անկեան մէջ զետեղել իբրև Հայ ժողովրդեան յառաջադիմութեան պատկեր և նկարագիր։

Քիչ մը վերև ասացի, որ կենացս դէպքերը զիս Հայաստանի արևմտեան սահմանէն արևելեան կողմերը քշեցին, այժմ ուրիշ խօսքով ըսելով կասեմ թէ՝ բաղդը և ճակատագիրը զիս շատ թափառեցրին նախնեաց սուրբ հողերուն մէջ, որոնք եթէ կ՚ներուի ինձ ասել՝ միանալով իմ ստացած փոքրիկ դաստիարակութեանս և ուսմանս հետ շատ լաւ կերպով ծանօթացրին ինձ իմ ազգի վարուց՝ բարուց՝ սովորութեանց՝ սրտի՝ մտքի՝ զգացմանց և այլ շատ յատկութեանց հետ։ Եւ ահա այս բաղդն և ճակատագիրն էր որ այս անգամ զիս Ագուլիսու նախնեաց մի հռչակաւոր գաւառը ձգեց, ուր ուսման տաճար մի՝ սրբութեան տուն մի՝ Հայ աշակերտաց խումբ մը աշակերտուհիների կաճառի մը հետ ինձ մեծ ուրախութիւն պատճառեցին, զորս - այն իմ քոյրերին ու եղբայրներին թող ներեն ինձ Արտաշէսի Սաթենկի և այլ նախնի դիւցազանց վեհութիւնները երգող ծիլերը անուանել։

Ագուլիսը յայտնի է հին Հայաստանի տեղեակ լինող անձանց՝ որ գտնվում է Գողթան գաւառի մէջ. յայտնի է նոյնպէս Կովկասեան գաւառների արդի աշխարհագրական բաժանման վերայ հասկացողութիւն ունեցող պարոններին՝ որ նա մի բանուկ ճանապարհի վերայ չէ։ Ուրեմն պէտք է եզրակացնել թէ՝ Ագուլեցիք եթէ ծաղիկ հաւաքող մեղուի բնաւորութիւն չունենային՝ անշուշտ իրանց վիճակին ալ պիտի համապատասխան ըլլար մեր այլ գիւղացւոց դրութեան հետ։ Սակայն փառք իրանց՝ ժիր՝ գործունեայ և այլ ազնիւ յատկութիւններով զարդարեալ բնաւորութեանց, որով նոքա իրանց յայտնի են կացուցած իւրեանց ազգին վաղուց նիւթական կեանքի յառաջադիմութեամբ ընդհանուրի վերաբերմամբ, իսկ դաստիարակական կեանքի յառաջադիմութեամբ մասնաւորի նկատմամբ։ Այս վերջին ժամանակները նոքա գիտենալով՝ որ նիւթական լուսաւորութիւնը առանց ընդհանուրի բարոյական և ուսումնական յառաջադիմութեան իրանց փառք չ՚բերելէն ի զատ՝ կ՚վնասէ ևս այս քաղաքակրթեալ դարին մէջ, շտապեցին միանալով մի սրտով և միաբանութեամբ՝ մի սիրով և զգացմունքով մեծամեծ զոհաբերութիւններ անելով լուսաւորութեան տներ հիմնել, անց կենալով Ռուսիոյ հովանաւորութեան տակ եղող մերայնոց շատերից, որոնցից նրանի՜ օրինակ առնէին վերջինները։ Այո՛ ես կը խոստովանիմ՝ որ Ագուլեցիների առաջ չ՚կայ այն՝ ինչ որ միւս Հայ քաղաքացիների առաջը կայ։ Սակայն ժամ է այժմ՝ և շատոնց որ վերջինները իրանց որդւոց դաստիարակելու դռները լաւ ճանաչէին։ Բայց . . . . . .

Ուսումնարանը եկեղեցի է ասած են շատ անգամ երևելի և տաղանդաւոր գրիչներ. ես ալ կաւելացնեմ՝ թէ ուսումնարանը ցորենի մէջի որոմները առանց ցորենին վնասելու ջոկող գործարան է, բիծերը խտակող օճառ է, կեղտերը մաքրող ջուր է։ Ուստի ինչպէս եկեղեցին՝ նոյնպէս և ուսումնարանը յաւիտենական ըլլալ պէտք են. նորանց գոյութիւնը նոյն իսկ ազգի գոյութեան հետ պիտի կապուի և կաշկանդուի. եթէ մի ուսումնարանի հիմքերը անդունդին չեն հասնիր, նա գիսաւորի նման կերևնայ և կ՚կորչի։ Ի դէպ ասենք, կ՚վախնամ թէ ուշ կամ շուտ Ագուլեաց ուսումնարաններն ալ մեր այլ դժբաղդ դպրոցների բաղդն ունենայ։ Ահա՛ կարծիքս դորանց գիտմամբ։ Չըկարծէք Ագուլեցի համազգիք իմ՝ թէ ըսել կուզեմ որ դուք ժամանակին ստակ չէք վճարեր և դպրոցները կ՚կողպուին, քա՜ւ լիցի, ես այսպիսի մի միտք յիշողութեանս մէջ բերելն անգամ չեմ կամենար։ Սակայն միտքս ձեր և բոլոր Հայերի նիւթական կեանքը ապահովացնելու համար ունեցած միջոցների վերայ է, որոնք արդի քաղաքակրթեալ աշխարհի ունեցածներին հետ համեմատելով շատ թոյլ և խախուտ են, և զորս այս տեղ բացատրելը իմ այս յօդուածի նպատակէն աւելորդ սեպելով՝ այսքանը միայն կասեմ ինչպէս ձեզ նոյնպէս և բոլոր Հայերին՝ որքան կարելի է աշխատել՝ ճիգն թափել ժամանակի պահանջած արհեստները ձեր մէջ մտցնելու, ձեր վաճառականութիւնը Եւրոպականին մօտիկցնելու, որոնցից

ընիր բարիքներ բղխելէն յետոյ ուսումնարաններն ալ տեւական կըլլան։

Դուք ձեր գործքերի առաջ խոչընդոտներ և արգելքներ պատահելիս մի՛ նեղանաք, դա բնական է, տարիների սահելը կմաքրէ Հայկական ուղին, և այն ժամանակն մեր կառքերի անիւները առանց քարերի խփուելու հանգիստ կ՚գնան։

Յունիսի 27ին Ագուլիս եմ եղած․ աշակերտաց և աշակերտուհիների քննութիւնքը թէև վերջացած էին, բայց ուսումնարանաց վերատեսուչ մեծապատիւ Գէորգ Հախվէրտեանցէն, որոյ սենեակումը մի գիշեր հիւր եղայ, Թուաբանութեան ուսուցիչ Պ. Արէլ Տէր Մարտիրոսեանցէն, Պ. Արսէն Թոխմախեանցէն և Պ. Սամուէլ Գիւլզատեանցէն ինձ ցոյց տրված մարդասիրութեամբք դպրոցաց բոլոր հանգամանաց տեղեկացայ, որոնք ինչպէս վերեւն ալ ասացինք՝ զիս շատ գոհ ըրին*)։ Տասը տարեկան օրիորդ.ք և տղայ.ք այնպիսի թուաբանական խնդիրներ իմ՝ մօտ լուծեցին, որ ինձ հիացրին. այնպէս գեղեցիկ իրանց մայրենի լեզուով կարդացին գրեցին, իրանց հայրենի պատմութիւնը պատմեցին, որ ինձ զարմացրին. վերին դասատան աշակերտների վերայ Ռուսաց և Գաղղիոյ լեզուների մէջ այնքան յառաջադիմութիւն տեսայ, որից աւելի կարծում եմ թէ պահանջելը յարմար չէր լինիր. ամենէն աւելի ինձ յափշտակեցին մեծարու Գիւլզատեանցի՝ ամուսնոյ հսկողութեան տակ օրիորդների գործած ձեռագործները, որին թո՛ղ ներէ և թող տայ իմ խորին յարգանքներս սա յօդուածիս միջոցով յայտնել ։ Իսկ պարոն Տեսչին և յիշեալ ուսուցիչներին յայտնելով հրապարակով՝ եթէ կ՚ներեն՝ իմ շնորհակալութիւնս կ՚մատուցանեմ իրանց դէպ ի նոցա ունեցած ազնիւ զգացմանս անկեղծ հաւաստիքները։

Ի վերջոյ Ագուլեցւոց իւրեանց պարտքը կատարելուն համար գովեստներ տալն աւելորդ համարելով, կ՚մաղթեմ Երկնքէն՝ որ նոքա որդի Վեհափառ Հօր սրբազան նպատակներին համաձայն իւրեանց դպրոցաց էական կէտերը աւելի օրինաւոր, աւելի մեր ազգայնութեան հիմնական տարրներին համապատասխան ուղիներով շարժելու յաջողին։

Յակոբ Գ․ Կարապետեանց Ա․

ի 1870 ամի ի 5ն յուլիսի
ի Թաւրէզ։

---

(*) Այս դպրոցաց նկատմամբ ինձ մի անձանձիր կէտ կայ, զոր մի առանձին յօդուածով բացատրելու մտադիր եմ շուտով։

## Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Ներեցէք . . . առաջօրէն էի մտադիր, միայն այսքան անազանութեան պատճառը աչքերիս տկարութիւնը է եղել․ արդ եւ չմոռանալով երբ ժամանակ առ ժամանակ մտաբերում եմ 'ի ներքոյ յիշեալ այս 1870 թուի հարցաքննութեան օրերի ցուցած յառաջադիմութիւնը աշակերտաց Հոգևոր դպրոցի, "Ինձ համար էլի նոր Մայիս է համարում,,,

Ուստի սրտիս ուրախութիւնից շարժուած, որ իսկ ականատես եմ եղած, այսօր եմ կարողանում դիմել դէպ 'ի ձեզ ներկայ գրութեամբս, յուսալով որ առաջի խնդիրս է՝ տեղի կ՚շնորհէք Ձեր պատուական աւէտաբեր ամսագրոյ մէջ, որով անչափ գոհութիւն կընդունիք։

Գանձակ քաղաքիս Հայոց Ազգային հոգևոր դպրոցի տարեկան հարցաքննութիւնը մայիսի 38էն սկսելով մինչև 'ի Յունիս ամսոյ 13ն աւարտեցաւ. հարցաքննութեան հանդէսին ներկայ էին տեղւոյս Հոգևոր Կառավարութեան Արժանապատիւ Անդամները հանդերձ քանի մի զինուորական Քահանայիւք և Հոգաբարձուքը դպրոցի. իսկ աշակերտաց ծնողներից և իշխաններից ոչ սակաւ։

Հարցաքննութիւնը դեռ չաւարտած 18ն Յունիսի մուտ գործեց նորոգ նշանակեալ Արժանապատիւ Յաջորդ Գրիգոր Վարդապետ Տէր Ստեփանեան, պատուական հիւրը նոյն օրից անյապաղ ներկայ և քննիչ գոլով կարի կանոնաւոր հարցմունքներ առաջարկեց աշակերտացը . . . բաւականանալով այնպէս, որ բոլոր հանդիսականքը վկայեցին այնու ուսումնարանի բարեկարգութիւնը տեսնելով՝ յետ աւարտման 'ի բերան առեալ զբան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այն է, "Ես եմ որթն և Հայրն իմ մշակ է", բարգելով . . . մի համառօտ ազդու քարոզ խօսաց, որոյ մէջ գոհանալով օրհնում էր զՕգոստափառ Կայսրն ամենայն Ռուսաց զԱղէքսանդր Նիկօլայեւիչ, ընդ նմին և Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Գէորգ Դ Սրբազնագոյն Կաթողիկոսի կեանքը, որ միշտ ջանադիր են տարածել մեր ազգի զաւակաց մէջ ուսումն բարւոք կրթականութեան, ապա հոգաբարձուացը ուսուցչաց և մատաղերամ մանկանց եւն։